## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ / ԴՇՀ/ 2013թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2013թ. ընթացքում Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները:

1. Հունվար-փետրվար ամիսներին դասագրքերի բաշխման վերաբերյալ մարզպետարանների կրթության վարչությունների ներկայացրած հաշվետվությունների հիման վրա կազմվել է 2012-2013 ուսումնական տարվա տարեկան հաշվետվությունը՝ ըստ յուրաքանչյուր անուն դասագրքի բաշխման քանակների:
2. 2013թ. հունիսին 2011թ. և 2012թ.մրցույթներով անցած 17 անուն՝ “ Հայրենագիտություն 5”, “ Բնագիտություն 5”, “ֆիզիկա 7”, “Քիմիա 7”,“Հայոց պատմություն 6”, “Համաշխարհային պատմություն 6”, “Հայոց պատմություն 8”, “Կենսաբանություն 7”,”Համաշխարհային պատմություն 8”,“Հասարակագիտություն 8”, “Աշխարհագրություն 6”, “Աշխարհագրություն 7”, “Հայոց լեզու 9”, “Գրականություն 9”, “Հանրահաշիվ 9”, “Երկրաչափություն 9”, “Երաժշտություն 7” դասագրքերի վերջնական տարբերակները ներկայացվել են Կրթության ազգային ինստիտուտ՝ մասնագիտական կարծիքի, որի հիման վրա դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների լրամշակված տարբերակները ՀՀ ԿԳ նախարարի կողմից երաշխավորվել են որպես հիմնական դասագրքեր:
3. Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի համապատասխան հրամանների պայմանագրեր են կնքվել դասագրքերի մրցույթում հաղթած հրատարակչությունների հետ: Հուլիս–օգոստոս ամիսներին իրականացվել է 2013-2014 ուսումնական տարվա վերոնշյալ 17 անուն դասագրքերի հրատարակման և բաշխման աշխատանքները:
4. 2013թ. օգոստոս ամսին իրականացվել են հանրակրթական դպրոցների “Ռուսաց լեզու 5”, “Ռուսաց լեզու 8”, “Անգլերեն 5”, “Անգլերեն 7”, “Ֆրանսերեն 5”, “Ֆրանսերեն 7”, “Գերմաներեն 5”, “Գերմաներեն 7”, “Տեխնոլոգիա 5”, “ՆԶՊ 8”, “Աշխարհագրություն

9”, “Կենսաբանություն 9” դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների հրատարակման մրցույթի բացման, գնահատման և արդյունքների հաստատման աշխատանքները:

Յուրաքանչյուր առարկայից ներկայացրած դասագրքերի գնահատման համար գործել են երկու տարբեր հանձնաժողովներ՝ համապատասխանաբար կազմված գիտակրթական ու բուհական հաստատությունների ներկայացուցիչներից և ուսուցիչներից:

5. ՀՀ ԿԳ նախարարի 21.11.13թ. թիվ 1317-Ա/Ք “ 2012թ և 2013թ մրցույթներով անցած դասագրքերը և ուսուցչի ձեռնարկները փորձարկելու մասին” հրամանով նախատեսված 94 դպրոցներում փորձարկման են ուղարկվել 53 անուն դասագրքեր ու ուսուցչի ձեռնարկներ: Տնօրենների համար անց է կացվել սեմինար, որի ընթացքում պարզաբանվել են հանրակրթական դպրոցների “Բնագիտություն 6”, “Կենսանաբություն 8”, “Ֆիզիկա 8”, “Քիմիա 8”, “Հայոց պատմություն 7”, “Հայոց պատմություն 9”, “Համաշխարհային պատմություն 7”, “Համաշխարհային պատմություն 9”, “Հասարակագիտություն 9”, “Աշխարհագրություն 8”, “Ինֆորմատիկա 9” “Ռուսաց լեզու 5”, “Ռուսաց լեզու 8”, “Անգլերեն 5”, “Անգլերեն 7”, “Ֆրանսերեն 5”, “Ֆրանսերեն 7”, “Գերմաներեն 5”, “Գերմաներեն 7”, “Տեխնոլոգիա 5”, “ՆԶՊ 8”, “Աշխարհագրություն 9”, “Կենսաբանություն 9” դասագրքերի փորձարկման աշխատանքների հինախնդիրներն ու մեթոդները: Փորձարկման ենթակա դասագրքերն ու փորձարկման մեթոդական ուղեցույցները տրվել են համապատասխան դպրոցներին: Դասագրքերի փորձարկումը դպրոցներում կիրականացվի մինչև 2014թ. ապրիլ ամիսը:

6. Մրցույթով անցած դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների էլեկտրոնային տարբերակները տեղադրվել են Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի /ԿՏԱԿ/ համապատասխան կայքում: Դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների վերաբերյալ ստացված դիտողություններն ու առաջարկները կտրամադրվեն համապատասխան հրատարակչություններին՝ դասագրքերի վերջնական տարբերակները պատրաստելու համար:

7. ԴՇՀ-ի մարզային կոորդինատորների կողմից ամփոփվել են դպրոցներից ստացված 2013-2014 ուսումնական տարվա դասագրքերի հայտերն ու հանձնարարականները, որոնց հիման վրա դպրոցների բանկային հաշիվներից գումարները փոխանցվել են համապատասխան հրատարակչություններին:

8. 2013թ. ընթացքում ԴՇՀ-ի աշխատակազմը մեթոդական օգնություն և ուսումնասիրություններ կազմակերպելու նպատակով այցելել է հանրապետության մարզեր, հանդիպումներ ունեցել դպրոցների տնօրենների, գրադարանավարների հետ, անցկացրել սեմինարներ և խորհրդակցություններ: Որոշ դպրոցներում աշխատանք է տարվել նաև ծնողների և աշխատանքային կոլեկտիվների հետ:
9. Ուսումնական տարվա ընթացքում ԴՇՀ-ի աշխատակազմը աշխատանքներ է տարել դպրոցների կողմից դասագրքերի դիմաց համապատասխան ներդրումներն ապահովելու ուղղությամբ՝ դասագրքերի հրատարակման շարունակականությունն ապահովելու նպատակով: Արդյունքում, 2012-2013 ուսումնական տարում դասագրքերի դիմաց ներդրումների հավաքագրումը հանրապետության կտրվածքով կազմել է մոտ 99 տոկոս:
10. 2013թ. ընթացքում՝ ըստ գործող կարգի, HSBC Հայաստան բանկի կողմից 2 անգամ տրամադրվել են դպրոցների ընթացիկ վճարումների բանկային քաղվածքները: Տարվա ընթացքում ստուգվել է դպրոցների բանկային քաղվածքների համապատասխանությունը և հայտնաբերված սխալ փոխանցումները ուղղվել են:
11. ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեխնոլոգիական վերազինման և տեղեկատվական ու հաղորդակցական նորարարական տեխնոլոգիաների տրամադրման ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է ծրագրի իրագործման մեխանիզմների հստակեցում: Ըստ այդմ, ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեխնոլոգիական վերազինման և տեղեկատվական և հաղորդակցական նորարարական տեխնոլոգիաների տրամադրման ծրագիրը լրամշակվել և ներկայացվել է ՀՀ վարչապետին: Լրամշակված ծրագիրը ՀՀ վարչապետի կողմից 22.05.2013թ համապատասխան գրությամբ (ՀՀ 099/13391-13) ընդունվել է ի գիտություն:

Այդ ծրագրով շարունակվել է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեխնոլոգիական վերազինման և տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների տրամադրման ծրագրի իրականացման աշխատանքները: Ծրագրի շրջանակներում հանրապետության 16 դպրոցներ ստացել են 426 համակարգիչներ:

Համագործակցելով մատակարար կազմակերպության հետ 2013 թ. հունիսի 24-28-ը կազմակերպվել է առաջին և երկրորդ փուլերում սարքավորումներ ստացած դպրոցների ուսուցիչների վերապատրաստում:

12. ՀՀ կառավարության 28.03.2013 թվականի թիվ 293-Ն որոշմամբ հաստատվել է <<ՀՀ հանրակրթական համակարգում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման մոնիթորինգի ազգային համակարգի ստեղծում և նոր հանրային քաղաքականության փաստաթղթի մշակում՝ ՀՀ դպրոցներում ՏՀՏ կիրառման արդյունավետության բարձրացման նպատակով>> ծրագրի նախահաշիվը: Վերոնշյալ ծրագիրն իրականացվել է ՀՀ-ում ՅՈՒՆԵԿՍՕ-ի կողմից իրականացվող կրթական, գիտական և մշակութային ծրագրերի շրջանակներում: 2013 թվականի ընթացքում վերոնշյալ ծրագրով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- կրթության համակարգում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման գնահատման և մշտադիտարկման միջազգային համակարգերի ուսումնասիրություն,
- ՀՀ հանրակրթության համակարգում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ կատարված աշխատանքների ուսումնասիրություն,
- ՀՀ հանրակրթական համակարգում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման գնահատման և մշտադիտարկման ազգային համակարգի մեթոդաբանության և ցուցանիշների շարքի մշակում,
- ՀՀ հանրակրթական համակարգում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման գնահատման և մշտադիտարկման ազգային համակարգի համար հարցումների հետազոտության գործիքների մշակում, նշված համակարգի փորձարկման համար իրականացվելիք հետազոտության ընտրանքի կազմում,
- ՀՀ հանրակրթական համակարգում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման գնահատման և մշտադիտարկման ազգային համակարգի փորձարկում,
- ՀՀ հանրակրթական համակարգում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման գնահատման և մշտադիտարկման ազգային համակարգի փորձարկման հաշվետվության կազմում,

- ՀՀ հանրակրթական համակարգում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման գնահատման և մշտադիտարկման ազգային համակարգի նախագծի քննարկում շահառուների հետ,
- ծրագրի կազմում, ֆինանսական և գնահատման հաշվետվությունների ներկայացում համապատասխան գերատեսչություններին:

13. ԴՇՀ-ն 2013թ. մասնակցել է հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/ ստանալու համար վերապատրաստումներ իրականացնելու նպատակով ՀՀ ԿԳՆ-ի հայտարարած վերապատրաստող կազմակերպությունների մրցույթին: Մրցույթի արդյունքում կազմակերպությանը տրվել է իրավունք իրականացնելու այդ վերապատրաստումները, որի շրջանակում վերապատրաստվել է 48 անձ:
14. ՀՀ հանրակրթության համակարգում ՏՀՏ կիրառման մոնիթորինգի համակարգի ստեղծման և ՏՀՏ կիրառման արդյունավետության բարձրացման քաղաքականության փաստաթղթի մշակման նպատակով կազմակերպվել է սեմինար ԴՏՀՏՇՀ գրասենյակում, ինչպես նաև կազմվել է երկրի հաշվետվությանը՝ ՅՈՒՆԵՍԿՈՅԻ պատվերով:
15. 2013թ. նոյեմբերից սկսվել է 2013-2014 ուստարվա դասագրքերի վերաբերյալ ՀՀ ԿԳՆ-ի, մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի կողմից դպրոցների հաշվետվությունների ընդունման գործընթացը: Դրանք ամփոփելուց հետո հաշվետվությունները ներկայացվել են ԴՇՀ: Ներկայումս աշխատանքներ են տարվում հանրապետական ամփոփ հաշվետվությունը կազմելու և 2013-2014 ուստարվա դասագրքերի վերարտադրության ներդրումային գումարներն ապահովելու ուղղությամբ: 2014թ. փետրվարի 1-ի դրությամբ ըստ մարզերի դասագրքերի դիմաց կատարված ներդրումների հավաքագրումը հանրապետության կտրվածքով կազմել է մոտ 84.4 տոկոս: